ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Հայաստանում տեղի ունեցած երկրաշարժը, ինչպես որ բոլոր սովետական մարդկանց, մինչև հոգու խորքը ցնցեց Լեռնային Ղարաբաղի յուրաքանչյուր բնակչի: Մարզի բնակչությունը իսկույն ևեթ օգնության ձեռք մեկնեց եղբայրական հանրապետությանը:

Տարերային աղետից տուժած շրջաններ մեկնեցին տեխնիկայի շարասյունը, շինարարների ու մեխանիզատորների մի մեծ ջոկատ: Վերջին օրերս այդ շրջաններ ուղարկվեցին անկողնային պիտույքներ, հագուստ, վրաններ: Տուժածներին պարենամթերքով ապահովելու համար Լեռնային Ղարաբաղը տարերային աղետի շրջան է ուղարկել նաև սննդամթերք: Ինքնավար մարզի հազարավոր բնակիչներ դարձան դոնորներ, աղետյալների օգնության ֆոնդին արդեն փոխանցվել է շուրջ 4 միլիոն ռուբլի:

Ստեփանակերտի էլեկտրատեխնիկական գործարանի բանվորները առաջարկել են եռահերթ աշխատանք կազմակերպել, որպեսզի բուժական սարքավորումներ թողարկեն Հայաստանին օգնելու համար:

Սակայն աղետյալների նկատմամբ համաժողովրդական սրտակցության այս պայմաններում ևս որոշ ինքնակոչ լիդերներ սադրում են նոր գործադուլ հայտարարել, երկրի աղետն ու վիշտը օգտագործել իրենց անվայել նպատակների համար, դրանք զոհաբերում են իրենց քաղաքական պատվախնդրությանը:

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

(ՏԱՍՍ)